

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 38/8**

ք.Երևան

3 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Գաբրիել Թևոսյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Ա/Ձ Գաբրիել Թևոսյանը հայտնում է, որ 2017թ. ընթացքում աշխատել է շրջանառության հարկի դաշտում: 2018թ. հունվարի 20-ին Ա/Ձ Գաբրիել Թևոսյանն էլեկտրոնային եղանակով ստորագրել և ուղարկել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Սակայն իրենից անկախ պատճառով այն տեղ չի հասել և չկա ուղարկված հաշվետվությունների մեջ: Հաշվետվությունը գոյություն ունի ՀՏ իր էջում՝ չուղարկվածներ բաժնում, որտեղից երևում է հաշվետվության իր կողմից ստորագրման ամսաթիվը և հարկային տեսչության կողմից տրված թվային համարները (հաշվետվությունը կցվում է):

Հաշվի առնել վերոհիշյալ հանգամանքը՝ Ա/Ձ Գաբրիել Թևոսյանը խնդրում է ուսումնասիրել իր կողմից կազմված և էլեկտրոնային եղանակով ստորագրված, սակայն անհայտ պատճառով տեղ չհասած 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը և թույլ տալ 2018թ. համարվել շրջանառության հարկ վճարող:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Ա/Ձ Գաբրիել Թևոսյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 04.07.2017թ. և 2017թ. ընթացքում համարվել է շրջանառության հարկ վճարող:

Ա/Ձ Գաբրիել Թևոսյանը 2018թ. հունվարի 20-ին եղանակով ստորագրել և ուղարկել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն հայտարարությունների հաշվառման համակարգում այն փաստացի չի հաշվառվել:

**3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նուտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա

ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Գաբրիել Թևոսյանը բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Գաբրիել Թևոսյանը 2018թ. հունվարի 20-ին էլեկտրոնային եղանակով ստորագրել և ուղարկել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն հայտարարությունների հաշվառման համակարգում այն փաստացի չի հաշվառվել (գործում առկա է համապատասխան ապացույցը):

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Գաբրիել Թևոսյանին ներկայացնելու հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

#### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Գաբրիել Թևոսյանի դիմում-բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Գաբրիել Թևոսյանի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



ՌՄԱՇԱԴՅԱՆ